# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գողթ համայնք, հրապարակի 1 E-mail goght.kotayq@mta.gov.am 093556519

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2014 թ N 9

### ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի պահանջները՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

ՀԱՍՏԱՏԵԼ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014Թ- Ի ՄԱՐՏԻ 14-Ի N3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գողթ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը ուղղակի վաճառքի նպատակով օտարելու մասին:
2. Գողթ համայնքի ավագանու 24.01.2014թ թիվ 3, 4-Ն, և 5 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Գալստյան Սամվել Սլավի
2. Հարությունյան Լևոն Վրեժի
3. Հովասափյան Բաբիկ Վրեժի
4. Հովսեփյան Վարիչ Լյուդվիգի
5. Մովսիսյան Ալեքսան Աղասիի
6. Ստեփանյան Արտեմ Գառնիկի

Համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գողթ համայնք, հրապարակի 1 E-mail goght.kotayq@mta.gov.am 093556519


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2014 թ N 10

## ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի գ ենթակետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, համայնքի սեփականություն հանդիսացող /ծածկ. 07-026-0102-0174/ 7,3 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը /որից վարելահող 0,4008 հա, արոտավայր՝ 6,8992 հա ուղղակի վաճառքի եղանակով, ընդլայնման նպատակով/ քանի որ հնարավոր չէ որպես առանձին միավոր օտարել /սեփականության իրավունքով հարակից / ծածկ. 07-026-0105-0071/ 7,3 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր «Էկոտոմատո» ՓԲԸ-ին 980 000 դրամ արժեքով:
2. Հողամասի կադաստրային արժեքը վճարելուց հետո, հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Գալստյան Սամվել Սլավի
2. Հարությունյան Լևոն Վրեժի
3. Հովասափյան Բաբիկ Վրեժի
4. Հովսեփյան Վարիչ Լյուդվիգի
5. Մովսիսյան Ալեքսան Աղասիի
6. Ստեփանյան Արտեմ Գառնիկի

Համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գողթ համայնք, հրապարակի 1 E-mail goght.kotayq@mta.gov.am 093556519

## Ո Ր Ո Շ Ու Մ

14 մարտի 2014 թ N 11

### ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.01.2014Թ ԹԻՎ 3, 4-Ն, ԵՎ 5 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գողթ համայնքի ավագանու 2014թ-ի հունվարի 24-ի N 3 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը. որոշման նախաբանում «16 հոդվածի 29-րդ մասի պահանջները» բառերը փոխարինել «16 հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջները, բառերով:
2. Գողթ համայնքի ավագանու 2014թ-ի հունվարի 24-ի N 4-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը. որոշման վերնագիրը ձևակերպել «Գողթ համայնքի 2014թ-ի բյուջեն նոր խմբագրությամբ հաստատման մասին» բառերով:
3. Գողթ համայնքի ավագանու 2014թ-ի հունվարի 24-ի N 5 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1/ կետում «հաստատել Գողթ համայնքի ղեկավարի աշխատակազմի և Գողթ համայնքի մսուր-մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը» բառերը փոխարինել «հաստատել Գողթի գյուղապետարանի աշխատակազմի և Գողթ համայնքի մսուր-մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը » բառերով:
Համաձայն հավելվածի:

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Գալստյան Սամվել Սլավի
2. Հարությունյան Լևոն Վրեժի
3. Հովասափյան Բաբիկ Վրեժի
4. Հովսեփյան Վարիչ Լյուդվիգի
5. Մովսիսյան Ալեքսան Աղասիի
6. Ստեփանյան Արտեմ Գառնիկի

Համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

Հավելված 2
Գողթ համայնքի ավագանու 2014թ.-ի
Հունվարի 24-ի N 5 որոշման

ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՈՂԹԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ
ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

1. Աշխատակազմի թվաքանակը՝ 7
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափը

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԻ ՄԻԱՎՈՐԸ | ԴՐՈՒՅՔԸ | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀՀ ԴՐԱՄ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՏՆՕՐԵՆ | 1 | 1 | 96 680 | 96 680 |
| 2 | ԴԱՍՏԻԱՐԱԿ | 2 | 1 | 85 132 | 170 264 |
| 3 | ԲՈՒԺՔՈՒՅՐ | 1 | 1 | 59524 | 59524 |
| 4 | ԽՈՀԱՐԱՐ | 1 | 1 | 59524 | 59524 |
| 5 | ՊԱՀԱԿ-ՀԱՎԱՔԱՐԱՐ | 1 | 1 | 59524 | 59524 |
| 6 | ՀԱՇՎԱՊԱՀ | 1 | 1 | 59524 | 59524 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 7 | | | 505040 |

Գողթ համայնքի ղեկավար Ա. Հակոբյան